

«ԶԱՐԵՆՅԱՎԱՆԻ ՀԱՍՏՈՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԱՑ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ



**ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ Ղեկավարությանը

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ԿԱՐԾԻՔ**

Մեր կողմից իրականացվել է «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, բացառությամբ վերապահման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

**ԿԱՐԾԻՔԻ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ՀԻՄՔԵՐ**

Ընկերության 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները արտաքին աուդիտի չեն ենթարկվել:

Մենք հաստատվել ենք որպես Ընկերության աուդիտոր 31.05.2021թ. և հետևաբար չենք հետևել Ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների և հիմնական միջոցների փաստացի գույքագրմանը:

31.12.2020թ. դրությամբ պաշարների մնացորդը կազմել է 274,529,0 հազար. դրամ: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային միջոցներով համոզվելու 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա պաշարների մնացորդների ճշտության վերաբերյալ:

Ընկերությունը ներկայացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում չի բացահայտել կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները և մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը:

**ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ**

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544, էլ.հասցե՝ [auditservicellc@gmail.com](mailto:auditservicellc@gmail.com), վեբկայք՝ [www.pkfarmenia.com](http://www.pkfarmenia.com)

կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**ՂԵՎԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ԵՆԲԳՐԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

**ԱՌՐԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՐԴԻՏԻ ՀԱՄԱՐ**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում մեր կողմից հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 29.10.2021թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն՝

Որակավորված աուդիտոր

Որակավորված աուդիտոր՝



Գրո Դավթյան

Սիմոն Աբրահամյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .....	3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	5
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ .....	6
1. Ներածություն.....	6
2. Հիմնական գործունեությունը .....	7
3. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ .....	7
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն .....	8
5. Հասույթ .....	30
6. Վաճառքի ինքնարժեք.....	30
7. Գործառնական այլ եկամուտ.....	30
8. Վարչական ծախսեր.....	30
9. Գործարքներ կապակցված կողմերի հետ .....	31
10. Գործառնական այլ ծախսեր .....	31
11. Շահույթ և շահութահարկի գծով (ծախս)/ եկամուտ .....	31
12. Հիմնական միջոցներ.....	31
13. Ընթացիկ ակտիվներ .....	32
14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....	32
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	32
16. Ոչ ընթացիկ պարտավորություններ .....	32
17. Ընթացիկ պարտավորություններ .....	33
18. Եկամուտներին վերաբերող շնորհներ.....	33
19. Դատական հայցեր .....	33

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

Հազար դրամ	Հղում	2019թ.	2020թ.
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	11	1,441,407	1,331,523
Անավարտ ոչ ընթացիկ նյութակ.ակտիվներ		1,094,366	1,094,366
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>2,535,773</b>	<b>2,425,889</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>	12		
Պաշարներ (Ապրանքներ)		79,408	199,775
Արագամաշ առարկաներ		7,082	6,222
Անավարտ արտադրություն		30,011	41,120
Արտադրանք		24,842	26,962
<b>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր</b>	13		
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով		10,871	1,324
Դեբիտորական պարտքեր կանխավճարների գծով		361	72,435
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		12,970	4,888
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	23,516	127,611
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>189,061</b>	<b>480,787</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>2,724,834</b>	<b>2,906,676</b>
<b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Սեփական կապիտալ (Կանոնադրական)		89,515	89,515
Վերազնահատումից և վերաչափումից տարբերություն		2,211,115	2,114,444
Զբաղիված շահույթ		(16,124)	10,687
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>2,284,506</b>	<b>2,214,646</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	15		
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ		118,000	118,000
Ակտիվների վերաբերող շնորհներ		133,220	415,175
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>251,220</b>	<b>533,175</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>	16		
Կարճաժամկետ բանկային վարկեր		65,000	65,000
Կարճաժամկետ փոխառություններ		21,818	21,818
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով		2,583	3,955
Ստացված ընթացիկ կանխավճարներ		85,427	47,639
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեյին և սոց.ապահով.գծով		5,769	11,188
Եկամուտների վերաբերող շնորհներ			
<b>Ընթացիկ պահուստներ</b>		<b>8,511</b>	<b>9,255</b>
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>189,108</b>	<b>158,855</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>440,328</b>	<b>692,030</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>2,724,834</b>	<b>2,906,676</b>

Գործադիր տնօրեն  Ա.Սեփարյան

Գլխավոր հաշվապահ  Ս.Գաբրիելյան

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Չարենցավանի հասարոցաշինական գործարան» ՔՔԸ  
 Ֆինանսական հաշվետվություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Հղում	2019թ.	2020թ.
Հասույթ	5	551,805	414,531
Վաճառքի ինքնարժեք	6	(572,222)	(431,614)
Համախառն շահույթ		(20,417)	(17,083)
Գործառնական այլ եկամուտներ	7	17,638	3,632
Վարչական ծախսեր	8	(91,671)	(118,662)
Իրացումից շահույթ		(112,088)	(135,745)
Գործառնական այլ ծախսեր	9	(1,707)	(13,140)
Ֆինանսական եկամուտ			
Ֆինանսական ծախսեր		(9,811)	(8,450)
Գործառնական շահույթ		(96,157)	(145,253)
Այլ ոչ գործառնական շահույթ		6,330	92,211
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		(99,638)	(61,492)
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	10		(8,368)
Տարվա շահույթ/(վնաս)		(99,638)	(69,860)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2021 թվականի մարտի 10-ին:

Գործադիր տնօրեն  Ա.Մեիրաբյան

Գլխավոր հաշվապահ  Ս.Գարրիբյան



Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Բաժնետիրական կապիտալ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	89,515	2,354,394	(59,765)	2,384,144
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր				
Տարվա շահույթը/(վնասը)	-	-	(99,638)	(99,638)
Այլ համապարփակ եկամուտ		(143,279)	143,279	
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	89,515	2,211,115	(16,124)	2,284,506
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	89,515-	2,211,115	(16,124)	2,284,506
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	89,515	2,211,115	(16,124)	2,284,506
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր				
Տարվա շահույթ/վնաս	-	-	(69,860)	(69,860)
Այլ համապարփակ եկամուտ		(96,671)	96,671	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	89,515	2,114,444	10,687	2,214,646
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	89,515	2,114,444	10,687	2,214,646

Գործադիր տնօրեն \_\_\_\_\_ Ա.Մեհրաբյան

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_ Ա.Գաբրիելյան





**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

Հազար դրամ	2019	2020թ.
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	24.334	23.516
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	633.542	518.768
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	2.565	74.252
<b>Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր</b>	<b>636.107</b>	<b>593.020</b>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	(66.576)	(239,907)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(45.616)	(42,674)
Վճարումներ աշխատակիցներին	(251.579)	(242.863)
Վճարումներ բյուջե	(181.067)	(124,544)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(92.434)	(95,706)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	(596.687)	(745,694)
<b>Ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր</b>	<b>(245)</b>	<b>4.401</b>
<b>Ֆինանսական գործունեությունից</b>		
Ավանդի տոկոս, բանկի հաշվի մնացորդից տոկոս		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	30.000	300.000
Ավանդի հաշվի բացում այլ բանկում		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	(69.993)	(8.450)
<b>Ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր</b>	<b>(39.993)</b>	<b>291,550</b>
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի</b>	<b>24.334</b>	<b>23.516</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի մնացորդը.</b>	<b>23,516</b>	<b>127,611</b>

Գործադիր տնօրեն

Ա.Մեհրաբյան

Գլխավոր հաշվապահ

Ս.Գաբրիելյան



## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1. Ներածություն

#### (ա) Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայր «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» բաց բաժնետիրական ընկերություն (հաջորդիվ՝ Ընկերություն կամ Գործարան) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Գործարանի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Գործարանի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

#### (բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Գործարանի բաժնետերերն են՝ Հայաստանի Հանրապետության իրավաբանական և ֆիզիկական անձիք:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կազմում է 89,515 հազար ՀՀ դրամ: Այն բաժանված է 89,515 հասարակ բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1 հազար դրամ անվանական արժեքով: Բոլոր 89,515 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

71,612 բաժնետոմսերը (տեղաբաշխված բաժնետոմսերի 80% -ը) հանդիսանում են պետական սեփականություն և տնօրինվում են ՀՀ ԲՏԱ (նախկինում ՀՀ պաշտպանության) նախարարության կողմից (Ընկերության կանոնադրության 1.8 կետի 2020թ.հունվարի 30-ի փոփոխությամբ), իսկ 17,903 բաժնետոմսերը (մնացած 20 %-ը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին (ըստ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված սեփականատերերի ցուցակի՝ թվով 1306 ֆիզիկական անձ):

Գործարանի գործող կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 1996թ.ապրիլի 29-ին, գրանցման համար՝ 39.120.00820, (Վկայական թիվ 01 Ա 02642), իսկ փոփոխությունները գրանցվել են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Չարենցավանի տարածքային բաժնի կողմից:

Հարկ վճարողի հաշվառման համարն է (ՀՎՀՀ)՝ 02800056:

Գործարանի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, Եսայան փողոց, 2:

Գործարանի կառավարման և ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման մարմիններն են.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը
- Ընկերության բաժնետերերի խորհուրդը
- Ընկերության գործադիր մարմինը ի դեմս գործադիր տնօրենի:

Խորհուրդը բաղկացած է 12 անդամից:

Հաշվետվության օրվա դրությամբ Խորհրդի նախագահը՝ ՀՀ ԲՏԱ նախարարության ռազմարդյունաբերական կոմիտեի նախագահի տեղակալ Արտյոմ Ղևոնդյանն է:

Գործարանի գործադիր տնօրեն Արտյոմ Մեհրաբյանը նաև խորհրդի անդամ է:

## 2. Հիմնական գործունեությունը

Գործարանի գործունեության հիմնական նպատակներն են.

- Մետաղամշակման հաստոցների, մետաղյա իրերի, կիսաֆարրիկատների արտադրություն.
- Սպառազինության և ռազմական տեխնիկայի-վերանորոգում, արդիականացում.
- Նախագծային աշխատանքների կատարում.
- Առևտրամիջնորդական գործունեություն.

## 3. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ

ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ը Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները խորհրդի (<<ՄՍԽ) կողմից ընդունված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Մեկնաբանություններից՝ Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) կամ նախկին Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) կողմից մշակված:

### բ) Անընդհատության սկզբունք

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են անընդհատության հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը իրականացնում է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում: Երբ այդպիսի գնահատական տալիս Ընկերության ղեկավարությունը տեղյակ է դեպքերին կամ իրադարձություններին վերաբերող էական անորոշություններին, որոնք կարող են նշանակալի կասկածներ հարուցել կազմակերպության՝ անընդհատության հիմունքով շարունակելու կարողության վերաբերյալ, ապա այդ անորոշությունները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

Անընդհատության ենթադրության տեղին լինելը գնահատելու համար ղեկավարությունը հաշվի է առնում տեսանելի ապագային վերաբերող հասանելի ամբողջ տեղեկատվությունը, որն ընդգրկում է հաշվետու ժամանակաշրջանից հետո ոչ պակաս, քան տասներկուամսյա ժամանակաշրջան: Տեղեկատվության վրա հիմնվելու աստիճանը կախված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքին առնչվող փաստերից: Երբ կազմակերպությունն ունի շահութաբեր գործունեություն վարելու պատմություն և հեշտությամբ հասանելի է ֆինանսական ռեսուրսներին, ապա կազմակերպությունն առանց մանրամասն վերլուծության կարող է եզրակացնել, որ հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը տեղին է: Այլ դեպքերում, նախքան անընդհատության հիմունքը տեղին համարելը, ղեկավարության կողմից կարող է անհրաժեշտ լինել դիտարկել գործունեության լայն շրջանակ, որոնք կապված են ընթացիկ և ակնկալվող շահութաբերության, պարտավորությունների մարման ժամանակացույցի և այլընտրանքային ֆինանսավորման պոտենցիալ աղբյուրների հետ:

**(գ) Չափման հիմունքները**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով և հիմնական միջոցների, որոնք վերաչափվում են իրական արժեքով կանոնավոր հիմունքով:

**(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը հանդիսանում է Գործարանի ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

**(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության

կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

**4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը դա որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք կիրառվում են կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով:

Երբ որևէ ՖՀՄՍ կոնկրետ կիրառվում է որևէ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության նկատմամբ, այդ հոդվածի նկատմամբ կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ընտրվում է՝ կիրառելով այդ ՖՀՄՍ-ն:

Կոնկրետ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության նկատմամբ կիրառվող ՖՀՄՍ-ի բացակայության դեպքում ղեկավարությունն իր դատողությունների հիման վրա ինքնուրույն է մշակում հաշվապահական հաշվառման այնպիսի քաղաքականություն, որ տեղեկատվությունը լինի՝

ա) տեղին՝ օգտագործողների կողմից տնտեսական որոշումներ ընդունելու համար.

բ) արժանահավատ այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունները՝

- ճշմարիտ ներկայացնեն կազմակերպության ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը.
- արտացոլեն գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ոչ միայն իրավական ձևը, այլև դրանց տնտեսական բովանդակությունը.
- չեզոք են, այսինքն՝ կանխակալությունից զերծ.
- հաշվենկատ են.
- ամբողջական են բոլոր էական դրսևորումներում:

Նախորդ կետում նշված դատողություններն անելիս Ընկերության ղեկավարությունը պետք է անդրադառնա հետևյալ հաջորդականությամբ ներկայացված աղբյուրներին՝ հաշվի առնելով դրանց կիրառման հնարավորությունը՝

ա) նման և կապակցված հարցերին առնչվող ՖՀՄՍ-ներում ներկայացված պահանջները.

բ) ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի սահմանումները, ճանաչման չափա-նիշները և չափման հիմունքները՝ ներկայացված ՖՀՄՍ-ի կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքներում»:

Նշված դատողություններն անելիս Ընկերության ղեկավարությունը կարող է նաև հաշվի առնել ստանդարտներ սահմանող այլ մարմինների վերջին հրապարակումները, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներ մշակելու համար օգտագործում են նմանատիպ հայեցակարգային հիմունքներ, ինչպես նաև կարող է հաշվի առնել հաշվապահական այլ գրականություն և ոլորտում ընդունված փոփոխություններ:

Կազմակերպությունը ֆինանսական հաշվետվություններում բացահայտում է տվյալ հաշվետու տարում բացահայտված նախորդ ժամանակաշրջանի էական սխալները և ուղղումների ազդեցությունը:

### Արտարժույթ

#### Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացած տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտարժույթային հաշիվների մնացորդների վերահաշվարկման համար Գործարանի կողմից կիրառվել է հետևյալ փոխարժեքները՝ 1 ԱՄՆ դոլարը 522.59 ՀՀ դրամ, 1 ԵԿՐՈ 641.11 ՀՀ դրամ, 1 Ռուսական ռուբլի 7.02 ՀՀ դրամ:

### Հիմնական միջոցներ

#### Հիմնական միջոցների սահմանումը, ճանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են Ընկերությունում՝

ա) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, և

բ) նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով:

Այն հողը կամ շինությունը, որը պահվում է հիմնականում վարձակալական եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, ինչպես նաև այն հողը, որը պահվում է ներկայումս չորոշված նպատակով ապագա օգտագործման համար, դասակարգվում է որպես ներդրումային գույք, այլ ոչ թե հիմնական միջոց:

Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները, որոնք բավարարում են հիմնական միջոցի 2.1.1.1 սահմանմանը, դասակարգվում են որպես հիմնական միջոցներ:

Հիմնական միջոցների միավորը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և
- բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Այն հիմնական միջոցները, որոնց օգտագործումից Ընկերությունը տնտեսական օգուտների ներհույս չի ակնկալում, չեն ճանաչվում:

Այն դեպքերում, երբ հիմնական միջոցների տվյալ միավորը կազմող բաղկացուցիչները բավականաչափ նախն են և ունեն տարբեր օգտակար ծառայություն կամ Ընկերությանը օգուտ են բերում տարբեր կերպով, դրանք ճանաչվում են որպես առանձին ակտիվներ:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախատարադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

#### Հիմնական միջոցների հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են վերագնահատված արժեքով:

Հիմնական միջոցների վերագնահատված արժեքով հաշվառումն իրականացվում է հետևյալ սկզբունքներով՝

ա) հիմնական միջոցները վերագնահատված արժեքով հաշվառելու դեպքում այդ հիմնական միջոցները հաշվեկշռում ներկայացվում են վերջին վերագնահատման ամսաթվի դրությամբ իրական արժեքով՝ համաձայն ամսաթվից հետո կուտակված մաշվածությունը և արժեզրկումը:

բ) վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցները վերագնահատվում են, երբ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն էականորեն տարբերվում է դրանց հաշվեկշռային արժեքից: Լրացուցիչ տեղեկատվության բացա-կայության դեպքում վերագնահատումն իրականացվում է 5 տարի պարբերականությամբ:

գ) հողի և շինությունների իրական արժեքը դրանց շուկայական արժեքն է: Մեքենաների, սարքավորումների և այլ հիմնական միջոցների իրական արժեքը դրանց փորձաքննության միջոցով որոշված շուկայական արժեքն է: Երբ հիմնական միջոցների յուրահատուկ բնույթի և դրանց հազվադեպ վաճառվելու պատճառով չկա ձևավորված շուկայական արժեք, դրանք գնահատվում են փո-խարինման արժեքով (այն գումարով, որն անհրաժեշտ կլիներ վճարել ներկա պահին համանման ակտիվ գնելու համար)՝ համաձայն մաշվածությունը: Հիմնական միջոցների վերագնահատված արժեքը որոշվում է.

- այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով անկախ փորձագետների, կամ
- անկախ գնահատողի (գնահատող կազմակերպության) կողմից:

դ) երբ հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, վերագնահատման պահի դրությամբ կուտակված մաշվածությունը՝

- վերաձևակերպվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (այսինքն՝ սկզբնական արժեքի կամ դրան փոխարինող այլ գումարի) փոփոխությանը համամասնորեն այնպես, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատումից հետո հավասարվում է նրա վերագնահատված գու-մարին: Այս մեթոդը

սովորաբար կիրառվում է, երբ ակտիվը վերագնահատվում է վերականգնման արժեքի գործակցի միջոցով.

- հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և զուտ գումարը վերա-ձևակերպվում է վերագնահատված գումարի հիման վրա: Այս մեթոդը սովորաբար կիրառվում է, երբ ակտիվը վերագնահատվում է իր շուկայական արժեքով (օրինակ՝ հողը, շենքերը).

ե) երբ հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես վերագնահատվում է.

զ) երբ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում, սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն հիմնական միջոցի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած՝ ֆինանսական ար-դյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս ճանաչված նվազումը, ապա այդ չափով այն ճանաչվում է որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն հիմնական միջոցի նախկին վերագնահատումների ար-դյունքում առաջացած՝ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված արժեքի աճը, ապա այդ չափով այն դեբետազրվում է սեփական կապիտալին.

է) հիմնական միջոցների միավորի վերագնահատման արդյունքում առաջացած աճը, որը ներառված էր սեփական կապիտալում, հաշվեզրվում է չբաշխված շահույթին Ընկերության կողմից ակտիվն օգտագործելու ընթացքում մաշվածության հաշվարկմանը զուգընթաց: Հաշվեզրվող գումարի մեծությունը որոշվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությամբ:

#### **Հիմնական միջոցների վրա կատարվող հետագա ծախսումներ**

Հիմնական միջոցին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ այդ ծախսումների շնորհիվ այդ հիմնական միջոցից Ընկերություն կհոսեն ավելի շատ ապագա տնտեսական օգուտներ, քան ակնկալվում էր այդ հիմնական միջոցի նորմատիվային ցուցանիշ-ների սկզբնական գնահատումից, այսինքն՝ երբ դրանց շնորհիվ բարելավվում են հիմնական միջոց-ների՝ սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշները, մասնավորապես, երկարում է օգտակար ծառայությունը, ավելանում է հզորությունը, բարելավվում է թողարկվող արտադրանքի որակը կամ ծախսումներն էապես կրճատվում են:

Հիմնական միջոցների նորմատիվային ցուցանիշների գնահատականն իրականացվում է այդ հիմնական միջոցների՝ շահագործման հանձնելու ժամանակ, շահագործման ընդունելու համար պատասխանատու հանձնաժողովի կողմից:

Հիմնական միջոցների վրա հետագա ծախսումների իրականացման դեպքում իրավասու հանձնաժողովը տալիս է եզրակացություն նորմատիվային ցուցանիշների՝ սկզբնապես գնահատված մակարդակի համեմատ բարելավման աստիճանի վերաբերյալ, որն էլ հիմք է հանդիսանում այդ ծախսումների կապիտալացնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

#### **Հիմնական միջոցների մաշվածություն**

Հիմնական միջոցների միավորի մաշեցվող գումարը (մաշվածության միջոցով որպես ծախսում ճա-նաչման ենթակա գումարը) պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը գնահատվում է դրանք շահագործման ընդունելու պահին՝ շահագործման ընդունելու համար պատասխանատու հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով առնվազն հետևյալ գործոնները՝

**«Չարենցավանի հասարոցաշինական գործարան» ԲԲԸ  
ֆինանսական հաշվետվություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

- ա) ակտիվի օգտագործման ինտենսիվությունը՝ ներառյալ հերթափոխերի քանակը, պլանավորվող պարապորդները.
- բ) վերանորոգումների, վերակառուցումների և արդիականացումների քաղաքականությունը.
- գ) տեխնիկական հնացածությունը (բարոյական մաշվածությունը).
- դ) ակտիվի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումները:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը ընդհանուր առմամբ արտահայտված է ժամկետով: Որոշ յուրահատուկ հիմնական միջոցների համար օգտակար ծառայությունը արտահայտված է թողարկված արտադրանքով: Յուրաքանչյուր հիմնական միջոցի օգտակար ծառայությունը գրանցված է տվյալ հիմնական միջոցի անալիտիկ հաշվառման գրանցամատյաններում:

Հիմնական միջոցի մաշեցվող գումարը հավասար է դրա համախառն հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (մնացորդային արժեքն այն զուտ գումարն է կամ պիտանի նյութերի իրական արժեքը, որն Ընկերությունն ակնկալում է ստանալ ակտիվից դրա օգտակար ծառայության վերջում՝ դուրս գրման սպասվող ծախսերը հանելուց հետո) միջև տարբերությանը: Հիմնական միջոցի մնացորդային արժեքն ընդունվում է հավասար գրոյի, եթե առկա չէ տեղեկատվություն այն բանի վերաբերյալ, որ տվյալ հիմնական միջոցի կտրվածքով մնացորդային արժեքն էական գումար է կազմում: Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցի մնացորդային արժեքը հետագա յուրաքանչյուր վերագնահատման ամսաթվին վերանայվում է (կատարվում է նոր գնահատում): Գնահատումը հիմնվում է այն համանման ակտիվների մնացորդային արժեքների վրա, որոնց օգտակար ծառայությունն ավարտվել է, և որոնք գործել են նույն պայմաններում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը պարբերաբար վերանայվում է, և եթե նոր գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից, ընթացիկ և հետագա հաշվետու ժամանակաշրջանների մաշվածության գումարները ճշգրտվում են՝ անփոփոխ թողնելով նախորդ ժամանակաշրջանների համար հաշվարկված մաշվածության գումարները: Յուրաքանչյուր տարվա վերջին հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների վերանայման առաջարկությամբ հանդես է գալիս օգտակար ծառայության ժամկետների գնահատման համար պատասխանատու հանձնաժողովը:

Ակտիվի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, իսկ այն հիմնական միջոցի համար, որի օգտակար ծառայությունը արտահայտված է թողարկված արտադրանքով՝ կրառվում է թողարկված արտադրանքի միավորների մեթոդը:

Հիմնական միջոցների մաշվածության ժամկետները ըստ գծային մեթոդի ըստ դասերի հետևյալն են.

	Տարիներ
Շենքեր, շինություններ, կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ	20
Մեքենաներ և սարքավորումներ	10
Տրանսպորտային միջոցներ	5
Գրասենյակային գույք	5
Համակարգչային տեխնիկա	1
Այլ հիմնական միջոցներ	1

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**Հիմնական միջոցների դուրսգրում և արժեզրկում**



Հիմնական միջոցների միավորը դուրս է գրվում հաշվապահական հաշվեկշռից, երբ այն օտարվում է կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից, և ապագա ոչ մի տնտեսական օգուտ հետագայում դրանից չի ակնկալվում:

Այն դեպքերում, երբ անպիտան է դարձել (փոխարինվում է) հիմնական միջոցի առանձին բաղկացուցիչներից մեկը (մասնակի լուծարում), ապա դուրս գրվող (փոխարինվող) մասը գնահատվում է այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում լուծարվող մասի տեսակարար կշռին համապատասխան:

Հիմնական միջոցների դուրսգրումն իրականացվում է հիմնական միջոցների դուրսգրման համար պատասխանատու հանձնաժողովի կողմից: Հիմնական միջոցի դուրսգրումը հաստատվում է Ընկերության ղեկավարի կողմից:

Երբ հիմնական միջոցների միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը, ապա այդ հիմնական միջոցի գծով ճանաչվում է արժեզրկում՝ համաձայն «Ակտիվների արժեզրկում» թափանցիկ մոտեցումների (<<ՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտ):

### **Ոչ նյութական ակտիվներ**

#### **Ոչ նյութական ակտիվների սահմանումը**

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որը պահվում է արտադրությունում օգտագործելու, ապրանքներ (արտադրանք) մատակարարելու կամ ծառայություններ մատուցելու, այլ անձանց վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար:

#### **Ոչ նյութական ակտիվների ճանաչումը**

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ՝

- ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և
- բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հետևյալ ոչ նյութական միավորների ստեղծման գծով ծախսումները չեն ճանաչվում որպես ոչ նյութական ակտիվ, այլ ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախսեր.

գ) սկզբնավորման ծախսումները, բացառությամբ այն դեպքերի, երբ այս ծախսումներն ընդգրկվում են հիմնական միջոցների սկզբնական արժեքում: Սկզբնավորման ծախսումները բաղկացած են հիմնադրման ծախսումներից, ինչպիսիք են իրավաբանական անձ հիմնադրելու հետ կապված կազմակերպչական ծախսումները (իրավաբանական, գործավարական և այլն), գործունեության նոր տեսակ հիմնադրելու գծով ծախսումները (նախագործարկման ծախսումներ) կամ նոր ծառայություններ կամ գործընթացներ սկսելու հետ կապված ծախսումները (նախագործառնական ծախսումներ),

դ) կադրերի վերապատրաստման գծով ծախսումները,

դ) ամբողջ կազմակերպության կամ նրա մի մասի գտնվել ու վայրը փոփոխելու կամ վերակազմավորելու գծով ծախսումները:

#### **Ոչ նյութական ակտիվների սկզբնական չափումը**

Ինչպես ձեռք բերված, այնպես էլ ներստեղծված ոչ նյութական ակտիվները սկզբնապես չափվում են սկզբնական արժեքով:

Ոչ նյութական միավորի գծով ծախսումները, որոնք սկզբնապես Ընկերության կողմից նախորդ ժամանակաշրջաններում ճանաչվել են որպես ծախս, չեն ճանաչվում որպես ոչ նյութական ակտիվի սկզբնական

արժեքի մաս ավելի ուշ ժամանակաշրջաններում, նույնիսկ եթե այդ ժամանակաշրջաններում այդ ոչ նյութական ակտիվը սկսում է բավարարել ճանաչման չափանիշներին:

#### **Ոչ նյութական ակտիվների հետագա չափումը**

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումը:

#### **Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա**

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը (համախառն հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի տարբերությունը) պարբերական հիմունքով բաշխվում է նրա օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- ա) առկա է երրորդ կողմի պարտավորվածություն՝ օգտակար ծառայության ավարտին գնելու այդ ակտիվը, կամ
- բ) ակտիվի համար գոյություն ունի գործող շուկա, և մնացորդային արժեքը կարող է որոշվել՝ վկայակոչելով այդ շուկան, և հավանական է, որ այդպիսի շուկա գոյություն կունենա ակտիվի օգտակար ծառայության ավարտի դրությամբ:

Ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշակի է, թե անորոշ, իսկ որոշակի լինելու դեպքում Ընկերությունը պետք է որոշի նաև այդ օգտակար ծառայության տևողությունը կամ օգտակար ծառայությունը ներկայացնող արտադրանքի կամ նմանատիպ միավորների քանակը: Ոչ նյութական ակտիվը Ընկերության կողմից պետք է դիտարկվի որպես անորոշ օգտակար ծառայություն ունեցող, երբ բոլոր առնչվող գործոնների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ չկա որևէ կանխատեսելի սահմանափակում այն ժամանակահատվածի, որի ընթացքում այդ ակտիվից ակնկալվում է տնտեսական օգուտների ներհոսք դեպի կազմակերպություն:

Անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվը չի ամորտիզացվում, իսկ որոշակի օգտակար ծառայություն ունեցողն ամորտիզացվում է գնահատված օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Եթե ոչ նյութական ակտիվից առաջացող ապագա տնտեսական օգուտների նկատմամբ վերահսկողությունը ձեռք է բերվում սահմանափակ ժամկետով շնորհիված իրավաբանորեն ամրագրված իրավունքների միջոցով, ապա այդ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը չի գերազանցում իրավաբանորեն ամրագրված

իրավունքի ժամկետը, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավաբանորեն ամրագրված իրավունքները նորացվելի են, և նորացումն ըստ էության հաստատ է:

Ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով կազմակերպությունը սպառում է ակտիվի տնտեսական օգուտները: Եթե այդ մոդելը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել, ապա կիրառվում է գծային մեթոդը:

#### **Ոչ նյութական ակտիվների դուրս գրում և արժեզրկում**

Ոչ նյութական ակտիվը դուրս է գրվում հաշվապահական հաշվեկշռից, երբ այն օտարվում է կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից, և ապագա ոչ մի տնտեսական օգուտ հետագայում դրանից չի ակնկալվում:

Ոչ նյութական ակտիվի դուրսգրումն իրականացվում է ոչ նյութական ակտիվների դուրս գրման համար պատասխանատու հանձնաժողովի կողմից: Ոչ նյութական ակտիվի դուրսգրումը հաստատվում է Ընկերության ղեկավարի կողմից:

Երբ ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը, ապա այդ ոչ նյութական ակտիվի գծով ճանաչվում է արժեզրկումից կորուստ: Ի լրումն արժեզրկումը դիտարկելու

համար ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտով նախատեսված պահանջների, առնվազն յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում գնահատվում է հետևյալ ոչ նյութական ակտիվների արժեզրկված լինելը, եթե նույնիսկ չկա որևէ հայտանիշ, որ ակտիվն արժեզրկված է՝

- ա) այն ոչ նյութական ակտիվները, որոնք դեռևս մատչելի չեն օգտագործման համար, և
- բ) այն ոչ նյութական ակտիվները, որոնց ամորտիզացիոն ժամկետը սկզբնապես սահմանվել է քսան տարուց ավելի մեծ:

#### Ներդրումային գույք

Որպես ներդրումային գույք դասակարգվում են այն հողը և (կամ) շինությունը, որը պահվում է հիմնականում վարձակալական եկամուտ վաստակելու կամ երկար ժամկետում դրա արժեքի աճի նպատակով: Ներդրումային գույք է դասակարգվում նաև այն հող, որը պահվում է ներկայումս չորոշված նպատակով ապագա օգտագործման համար:

Այն դեպքերում, երբ գույքի մի մասը պահվում է վարձակալական եկամուտ վաստակելու, արժեքի աճի կամ ներկայումս դեռևս չորոշված նպատակով, իսկ մյուս մասը՝ արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, ապա, եթե նշված մասերը հնարավոր է առանձին-առանձին վաճառել, դրանք հաշվառվում են առանձին-առանձին: Եթե այդ մասերը հնարավոր չէ առանձին-առանձին վաճառել, ապա այդ գույքը համարվում է ներդրումային գույք միայն այն դեպքում, եթե դրա միայն աննշան մասն է պահվում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար: Հակառակ դեպքում այդ գույքը դիտարկվում է որպես հիմնական միջոց:

Այն դեպքերում, երբ գույքի վարձակալության հետ միաժամանակ վարձակալներին մատուցվում են որոշակի ծառայություններ (օրինակ՝ էլեկտրաէներգիայի ծառայություններ), ապա գույքն առանձնացվում է որպես ներդրումային գույք, եթե այդ ծառայությունների դիմաց վճարները կազմում են վարձակալության տալու համաձայնությամբ (պայմանագրով) նախատեսված ընդհանուր վճարի համեմատաբար աննշան մասը:

Ներդրումային գույքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

- ա) հավանական է, որ այդ ներդրումային գույքի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և
- բ) ներդրումային գույքի արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Այն ներդրումային գույքը, որից ապագա տնտեսական օգուտների ներհոսք Ընկերությունը չի ակնկալում, չի ճանաչվում որպես ակտիվ:

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, ընդ որում, սկզբնական արժեքի որոշումն իրականացվում է նույն հիմունքներով, ինչ հիմնական միջոցների դեպքում:

Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա կապիտալացվող ծախսումները)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը:

Որպես ներդրումային դասակարգված գույքը վերադասակարգվում է ակտիվների այլ խմբի մեջ, կամ որպես ոչ ներդրումային դասակարգված ակտիվը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք այն և միայն այն դեպքում, երբ դրանց օգտագործման եղանակի մեջ առկա է փոփոխություն, որի վկայություններն են՝

- ա) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով գույքի օգտագործումը սկսելը, այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես սեփականատիրոջ կողմից գրաղեցված գույք:

բ) գույքի բարելավումը սկսելը՝ հետագայում այն վաճառելու մտադրությամբ. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես պաշար.

գ) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով գույքի օգտագործումն ավարտելը. այս դեպքում սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք.

դ) որպես պաշար դասակարգված գույքի՝ այլ կողմին գործառնական վարձակալության տալը. այս դեպքում պաշարները վերադասակարգվում են որպես ներդրումային գույք, կամ

ե) գույքի կառուցման կամ բարելավման (որն իրականացվում է գույքը ապագայում որպես ներդրումային գույք օգտագործելու նպատակով) ավարտը. այս դեպքում կառուցված կամ բարելավված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք (կառուցման կամ բարելավման ընթացքում գույքը դասակարգվում է որպես անավարտ հիմնական միջոց):

Մնացած դեպքերում ներդրումային գույքը հաշվառվում է հիմնական միջոցների հաշվառմանը համանման սկզբունքներով:

#### **Հողի բարելավման ծախսումներ**

Հողի բարելավման ծախսումները կապիտալացվում են, եթե՝

ա) ակնկալվում է, որ դրանցից ներհոսող տնտեսական օգուտները կսպառվեն 1 տարին գերազանցող ժամկետի ընթացքում.

բ) դրանց արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հողի բարելավման ծախսումները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը: Դրանց հաշվառումն իրականացվում է հիմնական միջոցների հաշվառմանը համանման:

#### **Պաշարներ**

##### **Պաշարների սահմանումը և չափումը**

Պաշարները այն ակտիվներն են, որոնք.

ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար.

բ) արտադրության ընթացքում են՝ այդպիսի վաճառքի համար.

գ) արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

##### **Պաշարների ինքնարժեքը**

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ անհրաժեշտ ծախսումներ:

Պաշարների ձեռք բերման ծախսումները ներառում են ձեռք բերման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, կոմիսիոն վճարները, տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և պաշարների ձեռք բերման հետ ուղղակիորեն կապված այլ ծախսումները: Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում և հաշվետու ժամանակաշրջանում ծախս են ճանաչվում հետևյալ ծախսումները՝

ա) պահպանման ծախսումները, եթե դրանք նախատեսված չեն տեխնոլոգիական գործընթացով.

բ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ:

գ) վաճառքի (իրացման) ծախսումները:

#### **Պաշարների ինքնարժեքի բանաձևերը**

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է Միջին կշռված արժեքի բանաձևով:

#### **Պաշարների իրացման զուտ արժեքը**

Պաշարների իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկվում է, թե արդյոք առկա պաշարների ինքնարժեքը գերազանցում է դրանց իրացման զուտ արժեքը, թե ոչ՝ ըստ պաշարների դասերի: Եթե դա այդպես է, ապա տարբերության չափով ճանաչվում է պաշարների արժեքի նվազումից ծախս՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե հետագա ժամանակաշրջաններում այդ պաշարների իրացման զուտ արժեքը աճում է, ապա նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեքի նվազումից կորուստը հակադարձվում է՝ պայմանով, որ պաշարների նոր հաշվեկշռային արժեքը չգերազանցի դրանց ինքնարժեքը:

Ծառայությունների/Արտադրանքի մատուցման/ թողարկման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը/պատրաստի արտադրանքը, որի մատուցման/արտադրման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով: Սակայն երբ նյութերի գների անկումը այնպիսին է, որ ծառայության ինքնարժեքը գերազանցելու է իրացման զուտ արժեքին, ապա նյութերի ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեք:

Պաշարների իրացման զուտ արժեքը գնահատվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից, յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ:

Իրացման զուտ արժեքի գնահատման ժամանակ ուշադրություն է դարձվում պաշարների նշանակվածությանը: Օրինակ՝ պաշարների այն քանակի իրացման զուտ արժեքը, որոնց գծով արդեն առկա է վաճառքի պայմանագիր, հիմնվում է պայմանագրային գնի վրա:

#### **Պաշարների ծախս ճանաչումը**

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Պաշարների կորուստները ճանաչվում են որպես ծախս դրանց առաջ գալու պահին:

Արագամաշ առարկաները ճանաչվում են որպես ծախս շահագործման հանձնելու պահին:

#### **Աշխատակիցների հատուցումներ**

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների կողմից մատուցված ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող հատուցումներն են:

#### **Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

2.15.1.1 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները աշխատակիցների հատուցումներն են (բացի ազատման նպաստներից և սեփական կապիտալի գործիքներով (կամ դրանց հետ կապված) հատուցումներից), որոնք ամբողջությամբ ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը: Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են՝

**«Հարենցավանի հասարոցաշինական գործարան» ԲԲԸ  
ֆինանսական հաշվետվություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

ա) աշխատավարձերը.

բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները).

գ) շահույթի բաշխումները և պարգևավճարները.

դ) ոչ դրամային հատուցումները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել ա ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո.

բ) որպես ծախս՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ՀՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

Փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումներ ճանաչվում են՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ ա ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներ ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցի գումարի մեծությամբ, որն ակնկալվում է վճարել որպես հաշվետու ամսաթվի դրությամբ կուտակվա չօգտագործված իրավունքների արդյունք:

Շահույթի բաշխումների և պարգևավճարների վճարման ակնկալվող ծախսումները ճանաչում են այն ժամանակ երբ՝

ա) առկա է այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և

բ) պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ ոչ մի իրատեսական հնարավորություն չկա վճարում չկատարելու:

Շահույթի բաշխման կամ պարգևավճարների պլանների համաձայն, պարտականության գումարը կարող է արժանահավատորեն չափվել այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) պլանի ֆորմալ պայմանները պարունակում են հատուցման գումարի որոշման բանաձևը.

բ) վճարվելիք գումարները որոշում են մինչև ֆինանսական հաշվետվությունների՝ ներկայացման համար հաստատելը, կամ

գ) անցյալ փորձը տրամադրում է հստակ վկայություն կառուցողական պարտականության գումարի վերաբերյալ:

Իրենցից սահմանված մասհանումների պլան ներկայացնող հետաշխատանքային հատուցումներ (պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ)

Հետաշխատանքային հատուցումները աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո:

Ընկերությունը հետաշխատանքային հատուցումների նպատակով ֆիքսված մասհանումներ է կատարում սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, որով սահմանափակվում է Ընկերության պարտավորությունները հետաշխատանքային հատուցումների գծով: Այսինքն՝ Ընկերությունը չունի պարտականություն՝ կատարելու հետագա մասհանումներ, եթե հիմնադրամը չունենա բավարար ակտիվներ, որպեսզի վճարի աշխատակիցների բոլոր հատուցումները՝ կապված ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում աշխատակցի ծառայության հետ: Այս հետաշխատանքային հատուցումների պլանն իրենից ներկայացնում է սահմանված մասհանումների պլան:

Երբ աշխատակիցը ժամանակաշրջանի ընթացքում ծառայություն է մատուցում Ընկերությանը, Ընկերությունն այդ ծառայության դիմաց սահմանված մասհանումների պլանին վճարվելիք մասհանումը ճանաչում է՝

- ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված մասհանումները հանելուց հետո, և
- բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ՀՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

#### **Ազատման նպաստներ**

Ազատման նպաստները աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման այն բանի արդյունքում, որ՝

- ա) Ընկերությունը որոշում է դադարեցնել աշխատանքային պայմանագիրը մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- բ) աշխատակիցը որոշում է, աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում, կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

Ազատման նպաստները ճանաչվում են որպես պարտավորություն և ծախս այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը ցուցադրաբար պարտավորված է՝

- ա) դադարեցնել աշխատակցի կամ աշխատակիցների խմբի աշխատանքը մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- բ) տրամադրել ազատման նպաստներ՝ որպես առաջարկության արդյունք, որն արվել է աշխատանքից կամավոր ազատվելը խրախուսելու համար:

Ընկերությունը ցուցադրաբար պարտավորված է դադարեցնել աշխատանքը այն և միայն այն դեպքում, երբ նա ունի դադարեցման մանրամասն ֆորմալ պլան, որից հրաժարվելու ոչ մի իրատեսական հնարավորություն չունի: Մանրամասն պլանը առնվազն ներառում է՝

- ա) այն աշխատակիցների գտնվելու վայրը, գործառույթները և մոտավոր թիվը, որոնց ծառայությունը պետք է դադարեցվի.
- բ) ազատման նպաստները յուրաքանչյուր աշխատանքային մասնագիտության կամ գործառույթի գծով, և
- գ) պլանի իրագործման ժամանակը: Իրագործումը պետք է սկսվի որքան հնարավոր է շուտ, իսկ իրագործումն ավարտելու ժամանակը պետք է լինի այնպիսին, որ պլանում էական փոփոխություններ մտցնելը հավանական չլինի:

#### **Ակտիվների արժեզրկում**

##### **Արժեզրկման հասկացությունը**

Արժեզրկումից կորուստը այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը ակտիվի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է.

- օգտագործման արժեքը դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա (զեղչված) արժեքն է, որոնց առաջացումն ակնկալվում է ակտիվի շարունակական օգտագործումից և օտարումից՝ նրա օգտակար ծառայության վերջում:
- իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները այն գումարն է, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում՝ հանած օտարման ծախսումները:

Սույն բաժնում նշված մոտեցումները կիրառվում են բոլոր ակտիվների արժեզրկումը հաշվառելիս, բացառությամբ՝

- ա) պաշարների,
- բ) հետաձգված հարկային ակտիվների,
- գ) աշխատակիցների հատուցումներից առաջացող ակտիվների,
- դ) ֆինանսական ակտիվների, որոնք ներառված են ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի գործողության ոլորտում,
- ե) իրական արժեքով չափվող ներդրումային գույքի,
- զ) որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների (կամ օտարման խմբերի):

#### **Ակտիվների հնարավոր արժեզրկման դիտարկումը**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Ակտիվի արժեզրկման հայտանիշի առկայության գնահատումը կատարվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից: Եթե որևէ այդպիսի հայտանիշ գոյություն ունի, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե հնարավոր չէ ուղակիորեն որոշել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, ապա նախ որոշվում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է այդ ակտիվը, ապա այդ ակտիվի փոխհատուցվող գումարը:

Դրամաստեղծ միավորը ակտիվների փոքրագույն որոշելի (իդենտիֆիկացվող) խումբն է, որը շարունակական օգտագործումից առաջացնում է դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից:

Ներքոթվարկյալ հայտանիշերը կիրառվում են ինչպես առանձին ակտիվի, այնպես էլ դրամաստեղծ միավորի համար: Ակտիվի արժեզրկման հայտանիշներն առնվազն ներառում են՝

#### **Տեղեկատվության արտաքին աղբյուրներ**

- ա) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակ անցնելու կամ սովորական օգտագործման արդյունքում,
- բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ մոտ ապագայում տեղի կունենան Ընկերության համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ այն տեխնոլոգիական, շուկայական, տնտեսական կամ իրավական միջավայրում, որտեղ գործում է Ընկերությունը, կամ այն շուկայում, որի համար նախատեսված է տվյալ ակտիվը,
- գ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շուկայական տոկոսադրույքները կամ ներդրումների շուկայական այլ հատուցադրույքներն աճել են, և հավանական է, որ այդ աճը կազդի զեղչման դրույքների վրա, որոնք կիրառվում են ակտիվի օգտագործման արժեքը հաշվարկելիս, և էականորեն կնվազեցնի ակտիվի փոխհատուցվող գումարը:

#### **Տեղեկատվության ներքին աղբյուրներ**



- ա) վկայություն կա ակտիվի բարոյական մաշվածության կամ ֆիզիկական վնասվածության վերաբերյալ:
- բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ ակնկալվում է, որ մոտ ապագայում տեղի կունենան Ընկերության համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ: Այս փոփոխությունները կան վերաբերյալ կամ ակնկալվող օգտագործման աստիճանի (ինտենսիվության) և եղանակի մեջ: Այս փոփոխությունները կան են ծրագրեր՝ ակտիվը նախապես ակնկալվող ամսաթվից շուտ օտարելու կամ այն գործարանում ընդհատելու կամ վերակառուցելու վերաբերյալ, որին պատկանում է այդ ակտիվը, և
- գ) ներքին հաշվետվական համակարգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշներն ավելի ցածր են կամ կլինեն ավելի ցածր, քան ակնկալվում էր:

#### Փոխհատուցվող գումարի որոշումը

Եթե արժեզրկման հայտանիշ գոյություն ունի, ապա կազմակերպությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե ակտիվի իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսումները, կամ ակտիվի օգտագործման աստիճանի գումարներից որևէ մեկը գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա ակտիվն արժեզրկվում է մյուս գումարը գնահատելու անհրաժեշտություն չկա:

Ակտիվի իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսումները, կարող է հնարավոր լինել որոշել, եթե ակտիվը ակտիվը չի շրջանառվում գործող շուկայում: Այնուամենայնիվ, երբեմն հնարավոր չի լինում որոշել իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսումները, իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմեր միջև գործարքում» ակտիվի վաճառքից ստացվելիք գումարը արժանահավատորեն

գնահատելու հիմունքներ չլինելու պատճառով: Այս դեպքում որպես ակտիվի փոխհատուցվող գումար կարող է ընդունվել նրա օգտագործման արժեքը:

Եթե հիմք չկա ենթադրելու, որ ակտիվի օգտագործման արժեքն էապես գերազանցում է նրա իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսումները, ապա որպես ակտիվի փոխհատուցվող գումար կարող է ընդունվել նրա իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսումները: Հաճախ այդպես է լինում այն ակտիվի դեպքում, որ պահվում է օտարման նպատակով:

Փոխհատուցվող գումարը որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից: Այդ դեպքում փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը:

#### Ակտիվի օգտագործման արժեքի գնահատումը ներառում է հետևյալ քայլերը

- ա) այն դրամաստեղծ միավորի որոշում, որին պատկանում է տվյալ ակտիվը.
- եթե ակտիվի կամ ակտիվների խմբի միջոցով արտադրված արտադրանքի համար գոյություն ունի արտադրող շուկա, ապա այդ ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է որոշակիացվի որպես դրամաստեղծ միավոր: Եթե նույնիսկ այդ արտադրանքն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործվում է ներքին նպատակների համար:
  - որոշակիացվում են դրամաստեղծ միավորին վերաբերող կորպորատիվ ակտիվները:
- բ) դրամական միջոցների ապագա ներհոսքերի և արտահոսքերի գնահատումը, որոնք առաջանալու են ակտիվի (ակտիվների խմբի) շարունակական օգտագործումից և նրա վերջնական օտարումից.
- խելամիտ և օժանդակող ենթադրությունների հիման վրա,
  - ղեկավարության լավագույն գնահատականը տնտեսական պայմանների վերաբերյալ,
  - առավել մեծ կարևորություն պետք է տրվի արտաքին վկայություններին,

**«Չարենցավանի հասարոցաշինական ցուխում» ՓԲԸ  
ֆինանսական հաշվետվություններ 2020-ի տնտեսական տարեկան փաթեթում 3-ին ավարտված տարվա համար**

- հաստատված ամենավերջին ֆինանսական ցուցանիշների կամ կանխատեսական գնահատումների հիման վրա,
- չպետք է ներառի ապագա մտահաստատումից կամ ակտիվի արդյունավետության բարելավումից կամ կատարելագործումից առաջացող ֆինանսական միջոցներ,
- ընդգրկեն առավելագույնը որևէ տարաբնույթի մասնակաշրջան, եթե ավելի երկար ժամանակաշրջան չի կարող հիմնավորվել,
- չպետք է ներառեն ֆինանսական արժեքներումից դրամական միջոցների ներհոսքերը կամ արտահոսքերը,
- չպետք է ներառեն շահութահարկի վճարմանը կամ վճարումներ:

գ) նշված դրամական միջոցների ապագա հոսքերի նկատմամբ տեղին զեղչման դրույքի կիրառումը.

- առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը,
- արտացոլում է դրամի արժեքը մասնակաշրջանի,
- տվյալ ակտիվին (ակտիվները նախկին հաստատումները:

**Արժեզրկումից կորստի ճանաչումը**

Ակտիվի արժեզրկումից կորստի ճանաչումը նախ հնարավոր է որոշել առանձին ակտիվի արժեզրկումից կորուստը

Եթե հնարավոր է որոշել առանձին ակտիվի արժեզրկումից կորուստը, ապա արժեզրկումից կորստի ճանաչման համար կիրառվում են սույն կետում նշված մտահաստատումները:

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նկատարում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի մեծ է նրա հաշվեկշռային արժեքից: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը անմիջապես ճանաչվում է որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը, համաձայն ՀՀՄՍ-ների, հաշվառվում է վերագնահատված արժեքով (որոշում է ֆինանսական միջոցները): Վերագնահատված արժեքով հաշվառվող ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ ճանաչվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում՝ համաձայն այն ՀՀՄՍ-ի, որով կատարվում է մտահաստատումը:

Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվարկում ներգրավում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե պայմաններ առկա են) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարզորոշված շարժման նկատմամբ:

Ակտիվի արժեզրկումից կորստի ճանաչումը նախ հնարավոր չէ որոշել առանձին ակտիվի արժեզրկումից կորուստը

Եթե հնարավոր չէ որոշել առանձին ակտիվի արժեզրկումից կորուստը, ապա արժեզրկումից կորստի ճանաչման համար կիրառվում են սույն կետում նշված մտահաստատումները:

Առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը չի կարող որոշվել, եթե՝

- ա) ակտիվի օգտագործման արժեքը չի կարող վնասատվել որպես ակտիվի վաճառքի զուտ գնին մոտ (օրինակ, երբ ակտիվի շարունակական արտադրումից առաջացող դրամական միջոցների ապագա հոսքերը չեն կարող գնահատվել որպես անհրաժեշտ և:

բ) ակտիվը շարունակական օգտագործումից չի առաջացնում դրամական միջոցների այնպիսի ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվների շարունակական օգտագործումից առաջացած դրամական միջոցների ներհոսքերից: Այդպիսի դեպքերում օգտագործման արժեքը, հետևաբար նաև փոխհատուցվող գումարը, կարող են որոշվել միայն ակտիվի դրամաստեղծ միավորի գծով:

Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Նույն ակտիվի կամ համանման ակտիվների դրամաստեղծ միավորը պետք է որոշվի հետևողականորեն՝ մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխությունը հիմնավորված է:

Դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է որոշվի այն եղանակին համահունչ, որով որոշվում է դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը:

Դրամաստեղծ միավորի արժեզրկված լինելը ստուգելիս Ընկերությունը որոշում է, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ճանաչվել է տվյալ դրամաստեղծ միավորին վերաբերող (մասամբ կամ ամբողջությամբ) գույվիլ:

ա) Եթե դա այդպես է, ապա Ընկերությունն անցկացնում է «վարից վեր» ստուգում, այսինքն՝

I. որոշում է, թե արդյոք գույվիլի հաշվեկշռային արժեքը կարող է պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին, ապա

II. համեմատում է քննարկվող դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը նրա հաշվեկշռային արժեքի հետ (ներառյալ այդ միավորին բաշխված գույվիլի հաշվեկշռային արժեքը, եթե այդպիսին գոյություն ունի) և ճանաչում է արժեզրկումից կորուստ 0 կետի պահանջների համաձայն:

Ընկերությունն անցկացնում է «վարից վեր» ստուգման երկրորդ փուլը, եթե նույնիսկ գույվիլի հաշվեկշռային արժեքը հնարավոր չէ պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխել քննարկվող դրամաստեղծ միավորին:

բ) Եթե «վարից վեր» ստուգումն անցկացնելիս Ընկերությունը չի կարող գույվիլի հաշվեկշռային արժեքը պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխել քննարկվող դրամաստեղծ միավորին, ապա այն անցկացնում է նաև «վերից վար» ստուգումը, այսինքն՝

I. որոշում է այն փոքրագույն դրամաստեղծ միավորը, որը ներառում է քննարկվող դրամաստեղծ միավորը և որին պատճառաբանված և հետևողական հիմունքով կարող է բաշխվել գույվիլի հաշվեկշռային արժեքը (ավելի խոշոր դրամաստեղծ միավոր), ապա

II. համեմատում է այս՝ ավելի խոշոր դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը նրա հաշվեկշռային արժեքի հետ (ներառյալ այդ միավորին բաշխված գույվիլի հաշվեկշռային արժեքը) և ճանաչում է արժեզրկումից կորուստ 0 կետի պահանջների համաձայն:

Դրամաստեղծ միավորի արժեզրկված լինելը ստուգելիս Ընկերությունը որոշում է բոլոր այն կորպորատիվ ակտիվները, որոնք վերաբերում են (մասամբ կամ ամբողջովին) քննարկվող դրամաստեղծ միավորին: Ապա որոշված յուրաքանչյուր կորպորատիվ ակտիվի համար Ընկերությունը կիրառում է 0 կետը, այսինքն՝

ա) եթե կորպորատիվ ակտիվի հաշվեկշռային արժեքը կարող է պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին, Ընկերությունը կիրառում է միայն «վարից վեր» ստուգումը, և

բ) եթե կորպորատիվ ակտիվի հաշվեկշռային արժեքը չի կարող պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին, Ընկերությունը կիրառում է և «վարից վեր», և «վերից վար» ստուգումները:

Դրամաստեղծ միավորի անվ արժեքումից կորուստը ճանաչվում է այն դեպքում, եթե նրա փոխհատուցվող գումարն ավելի փոքր է հաշվարկային արժեքից: Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստը, այդ միավորի ակտիվների հաշվարկային արժեքը նվազեցնելու նպատակով, բաշխվում է հետևյալ հերթականությամբ՝

- ա) դրամաստեղծ միավորի բաշխված գումարից (եթե այդպիսին գոյություն ունի), ապա՝
- բ) դրամաստեղծ միավորի այլ ակտիվների համաձայնական հիմունքով, հիմք ընդունելով այդ միավորի յուրաքանչյուր ակտիվի հաշվարկային արժեքը:

Հաշվեկշռային արժեքի այլ նվազեցումները վերաբերում են որպես առանձին ակտիվների գծով արժեզրկումից կորուստ և ճանաչվում են Ծ կետի համաձայն:

Արժեզրկումից կորուստները Ծ կետի համաձայն բաշխելիս ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցման արդյունքում չպետք է փոքր լինի ըստ հետևյալ մեծություններից առավելագույնը՝

- ա) նրա վաճառքի գույք գինը նախ քան հատարվել է որոշել),
- բ) նրա օգտագործման արժեքը նախ քան հատարվել է որոշել), և
- գ) զրո:

Արժեզրկումից կորուստի գումարը, որն առանց բաշխվելու էր այդ ակտիվին, պետք է համաձայնական հիմունքով բաշխվի միավորի այլ ակտիվներին:

#### **Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան հատուցումը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունը ունի ներքին իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ հատուցման արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

#### **Ակտիվներին կամ եկամուտներին վերաբերող շնորհներ**

Շնորհը դա պետության կամ կազմակերպությունների կողմից միջոցների փոխանցումն է Գործարանին, անցյալում կամ ապագայում Գործարանի գործունեությանը վերաբերող որոշակի պայմանների դիմաց: Շնորհները դասակարգվում են՝

- ա) ակտիվներին վերաբերող շնորհներ, որոնց որմնական պայմանն այն է, որ շնորհի ստացողը պետք է գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ (ոչ ընթացիկ) ակտիվներ,
- բ) եկամուտներին վերաբերող շնորհներ, այն շնորհներն են, որոնք չեն վերաբերում ակտիվներին:

Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են, եթե միայն կա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կհամապատասխանի դրան կից պայմաններին, և շնորհը կստացվի:

Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ և ճանաչվում են եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սխտեմատիկ և ռաջիոնալ հիմունքով՝ ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

#### **Հասույթ**

Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության

հետ կապված ռիսկերի և հատուցված կրթական մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել արժանույժ հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե արժանույժ հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր

կլինի արժանահավատորեն չափել, ապա մեղը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատուցված փոխանցման ժամկետը կախված է առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից:

(ը) Այլ ծախսեր

(i) Սոցիալական ծախսումներ

Այն չափով որքանով սոցիալական նպատակները Գործարանի հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Գործարանի աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

### Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, պահուստների գծով զեղչի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները՝ ներառյալ առևտրական դեբիտորական պարտքերը:

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ վնասում: Այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթ կամ վնասում:

### Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Երկուստեքն էլ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ որոշակի արժանույթի կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկաբեկման տարբերակները ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և հետագայում կատարվող տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական տարբերությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հարկային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ձեռնարկատիրական տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերություններից, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների

սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ապրանքային չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է վերաբերյալ հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր ստանդարտներով նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

#### **Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեխանիզմություններ**

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեխանիզմություններ չէին գործում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կրողով այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

#### **Իրական արժեքի որոշում**

Գործարանի հաշվապահական հաշվարկման ցարգացականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում հիման ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Դրանք արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունները մասին ցուցուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող նախագրությունում:

#### **Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական գործիքը - պայմանագրի է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

Ֆինանսական ակտիվը - ակտիվ է, որը՝

- դրամական միջոց է:
- այլ կազմակերպության բաժնային արժեք է:
- պայմանագրային իրավունք է:
- այլ կազմակերպությունից դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու, կամ
- այլ կազմակերպության հետ, որ համար պտտենցիալ նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու, կամ
- պայմանագիր է, որը մարվելու է կամ կարող է մարվել կազմակերպության սեփական բաժնային գործիքներով և հանդիսանում է:
- ոչ ածանցյալ գործիք, որի անվճար կազմակերպությունը պարտավոր է կամ կարող է պարտավորվել ստանալու փոփոխական քանակության երեք բաժնային գործիքներ, կամ
- ածանցյալ գործիք, որը մարվելու է կամ կարող է մարվել այլ կերպ, քան ֆիքսված գումարի դրամական միջոցը կամ այլ ֆինանսական ակտիվ: Ֆիքսված քանակությամբ կազմակերպության սեփական բաժնային գործիքների հետ փոխանակելով:

Ֆինանսական պարտավորությունը պարտավորություն է, որը

- պայմանագրային պարտավորություն է:
- այլ կազմակերպությանը դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու, կամ
- այլ կազմակերպության հետ, որ համար պտտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու, կամ

- պայմանագիր է, որը մարվելու է կամ կարող է մարվել կազմակերպության սեփական բաժնային գործիքներով և հանդիսանում է՝
- ոչ ածանցյալ գործիք, որի գծով կազմակերպությունը պարտավոր է կամ կարող է պարտավորվել տրամադրելու փոփոխական քանակությամբ իր սեփական բաժնային գործիքները, կամ
- ածանցյալ գործիք, որը մարվելու է կամ կարող է մարվել այլ կերպ, քան ֆիքսված գումարի դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ֆիքսված քանակությամբ կազմակերպության սեփական բաժնային գործիքների հետ փոխանակելով:

Ֆինանսական գործիքը համարվում է բաժնային գործիք այն և միայն այն դեպքում, երբ այն բավարարում է ստորև (ա) և (բ) կետերում նշված երկու պայմաններին.

(ա) գործիքը չի պարունակում պայմանագրային պարտականություն՝

(i) այլ կազմակերպությանը դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու, կամ

(ii) այլ կազմակերպության հետ, թողարկողի համար պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու.

(բ) եթե գործիքը մարվելու է կամ կարող է մարվել հենց թողարկողի բաժնային գործիքներով, ապա այն՝

(i) ոչ ածանցյալ գործիք է, որը թողարկողի համար չի պարունակում պայմանագրային պարտականություն՝ տրամադրելու փոփոխական քանակությամբ իր իսկ բաժնային գործիքները, կամ

(ii) ոչ ածանցյալ գործիք է, որը մարվելու է՝ միայն թողարկողի կողմից ֆիքսված գումարի դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ֆիքսված քանակությամբ իր իսկ բաժնային գործիքների հետ փոխանակելով:

Ածանցյալ գործիք - ֆինանսական գործիք՝ օժտված ստորև նշված բոլոր երեք հատկանիշներով՝

- դրա արժեքը փոփոխվում է՝ ի պատասխան սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոփոխության, գների կամ դրույքների ինդեքսի, պարտքային վարկանիշի կամ պարտքային ինդեքսի, կամ այլ փոփոխականի փոփոխությունների՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին (երբեմն կոչվում են 'հիմքում ընկած').
- այն չի պահանջում սկզբնական զուտ ներդրում կամ պահանջում է ավելի փոքր սկզբնական զուտ ներդրում պայմանագրերի այլ տեսակների համեմատ, որոնք շուկայական գործոնների փոփոխություններին, ըստ ակնկալիքների, կհակազդեին նույնանման կերպով.
- նրա գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա ամսաթվին:

### Սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին պետք է այն չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած՝ (բացառությամբ, երբ դա ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն է, չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

### Ֆինանսական գործիքների չորս կատեգորիաների սահմանումները

1. Ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով, որը բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

- այն դասակարգված է որպես առևտրային նպատակներով պահվող.

- ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով.
  - սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամ-կետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ. կամ
  - ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինան-սական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված և արդյունավետ հեջավորման գործիք).
  - սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերության կողմից այն նախատեսվել է որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:
2. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ. ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք կազմակերպությունը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը:
3. Փոխառություններ և դեբիտորական/կրեդիտորական պարտքեր.
4. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք կազմակերպության կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, և չեն ներառվում նախորդ 3 կատեգորիաներից ոչ մեկում:

#### **Ֆինանսական գործիքների հետագա չափումը**

Ա/ Ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով - իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված ծախսումների գծով:

Բ/ Փոխառությունների և դեբիտորական/կրեդիտորական պարտքեր - ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այնուամենայնիվ, կարճաժամկետ առևտրային դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով, եթե զեղչման ազդեցությունը էական չէ (տես 2.7 կետը)

Գ/ Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ - ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դ/ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. - իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված ծախսումների գծով, բացառությամբ բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել - սկզբնական արժեքով:

#### **Իրական արժեքի չափման նկատառումներ**

Իրական արժեքի լավագույն վկայությունը գործող շուկայի գնանշված շուկայական գներն են:

Եթե ֆինանսական գործիքի շուկան գործող չէ, ապա կազմակերպությունը որոշում է իրական արժեքը՝ օգտագործելով գնահատման տեխնիկա: Գնահատման տեխնիկաները ներառում են.

- շուկայում վերջերս կատարված իրազեկ, պատրաստական «Անկախ կողմերի միջև գործարքների» օգտագործումը, դրանց առկայության դեպքում,
- մեկ այլ էականորեն չտարբերվող գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը,
- զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը,
- օպցիոնների գնահատման մոդելները:



Ընտրված գնահատման մեթոդը պետք է որպես մուտքային տվյալներ առավելագույնս օգտագործի շուկայական տվյալները և նվազագույնս հիմնվի կազմակերպությանը յուրահատուկ տվյալների վրա:

#### Իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտ կամ վնաս

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում;
- որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվի գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում, բացառությամբ.
- արժեզրկումից կորուստների և արտարժույթի փոխարժեքից առաջացած օգուտների կամ վնասների, քանի դեռ այդ ակտիվը ապաճանաչված չէ: Ապաճանաչման դեպքում, նախկինում այլ համապարփակ եկամտում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում;
- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում;
- վաճառքի համար մատչելի բաժնային գործիքի գծով շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ հաստատվում է վճարը ստանալու կազմակերպության իրավունքը: .

#### Պետական և այլ շնորհներ

Պետական և այլ շնորհները Ընկերությանը ռեսուրսների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն են՝ կազմակերպության գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում հա-մապատասխանության դիմաց:

Դրանք չեն ներառում.

- պետական օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խելամտորեն որևէ արժեք վերագրել,
- պետության հետ գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել կազմակերպության սովորական առևտրային գործարքներից:

Ակտիվներին վերաբերող շնորհները պետական շնորհներ են, որոնց հիմնական պայմանն այն է, որ կազմակերպությունը պետք է գնի, կառուցի կամ որևէ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ:

Եկամուտներին վերաբերող շնորհները ակտիվներին վերաբերող շնորհներից տարբերվող պետական շնորհներ են:

#### (i) Ճանաչում

Պետական շնորհները չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ.

- Ընկերությունը բավարարելու է դրանց կցված պայմանները, և
- շնորհները ստացվելու են:

Պետական և այլ շնորհները կարող է տրվել ոչ դրամային ակտիվի ձևով, ինչպես հողը կամ այլ ռեսուրսներ: Եթե կարելի է արժանահավորեն գնահատել (առանց նշանակալի ծախսերի, որոնք կգերազանցեն հաշվառումից ակնկալվող օգուտները) ստացված ոչ դրամային ակտիվի իրական արժեքը, ապա շնորհն ու ակտիվը հաշվառվում են այդ իրական արժեքով: Այլապես՝ թե՛ ակտիվը, և թե՛ շնորհը հաշվառվում են անվանական արժեքով: Երբ պետական շնորհը ճանաչվում է, դրա հետ կապված ցանկացած պայմանական պարտավորություն կամ պայմանական ակտիվ դիտարկվում է համաձայն ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի (տես 2.9):

«Չարենցավանի հասարցաշինական գործարան» ԲԲԸ  
 Ֆինանսական հաշվետվություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնապես ճանաչվում է են որպես հետաձգված եկամուտներ և ներկայացվում են պարտավորություններում՝ բացառությամբ 2.8.4. կետի վերջին պարագրաֆում նշված դեպքերի:

5. Հասույթ

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Արտադրանքի, ծառայության, ապրանքների իրացումից հասույթ	551,805	414,614
Ընդամենը հասույթ	551,805	414,614

6. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Մատակարարներին վճարումներ	(572,222)	(431,614)
Ընդամենը	(572,222)	(431,614)

7. Գործառնական այլ եկամուտ

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Արձակուրդային պահուստային ֆոնդից	15,468	3,322
Այլ	2,170	310
Ընդամենը	17,638	3,632

8. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Աշխատավարձ	69,045	89,980
Աշխատանքների, ծառայությունների ստացումից վճարներ	14,660	17,797
Հարկեր	5,352	5,293
Ներկայացուցչական	-	1,107
Բանկային ծառայությունների և ապահովագրության վճարներ	116	426
Այլ ծախսեր՝ վառելիք, գրասենյակային և այլ նյութեր	2,498	4,059
Ընդամենը	(91,671)	(118,662)

**9. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

**Ղեկավարության վարձատրությունը**

Տարվա ընթացքում ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Աշխատավարձ	9,788,600	15,546,352
Ընդամենը	9,788,600	15,546,352

**10. Գործառնական այլ ծախսեր**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Անաշխատունակության նպաստ և արձակուրդային պահուստային գումար	1.707	13.140

**11. Շահույթ և շահութահարկի գծով (ծախս)/ եկամուտ**

Ընկերությունը առևտրային գործունեության մասով շահութահարկը վճարում է հայկական կազմակերպությունների համար կիրառվող 18% դրույքով :

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Տարվա շահույթ	(99.638)	(61.492)
Ընթացիկ հարկի գծով ծախս		(8368)
Զուտ շահույթ հարկումից հետո	(99.638)	(69.860)

**12. Հիմնական միջոցներ**

Հազար դրամ Սկզբն. արժեք	Շենքեր, կառուցվածքներ և փոխ. հարմարանք	Մեքենա- սարքավորու մներ	Տրանսպորտային միջոցներ	Հողամաս	Այլ, արտ. տնտ. գույք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	1,880,491	380,771	31,489	34,199	7,031	2,333,981
Դուրս գրում	-	-	-	-	-	-
Ավելացումներ	-	-	-	-	1,181	1,181
Մնացորդը առ 31 դեկտեմբ. 2020թ	1,880,491	380,771	31,489	34,199	8,212	2,335,162
Կուտակված Մաշվածություն						
Մնացորդը առ 01 հունվարի 2020թ.	526,783	332,282	27,690		5,819	892,574
Դուրս գրում						
Ավելացում	97,879	11,418	786		982	111,065
Կուտ. մաշվ. մնաց. 31/12/2020	624,662	343,700	28,476		6,801	1,003,639

**«Չարենցավանի հասարոցաշինական գործարան» ԲԲԸ**  
**Ֆինանսական հաշվետվություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

Հաշվ.արժեքի մն. առ 31 դեկտեմբերի 2019թ.	1,353,708	48,489	3,799	34,199	1,212	1,441,407
Հաշվ.արժեքի մն. առ 31 դեկտեմբերի 2020թ.	1,255,829	37,071	3,013	34,199	1,411	1,331,523

**13. Ընթացիկ ակտիվներ**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Նյութեր և ապրանքներ	79,408	199,775
Արագամաշ առարկաներ	7,082	6,222
Անավարտ արտադրություն	30,011	41,120
Արտադրանք	24,842	26,962
Ընդամենը	<b>114,343</b>	<b>274,079</b>

**14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	10,871	1,324
Դեբիտորական պարտքեր կանխավճարների գծով	361	72,435
Կարճաժամկետ դեբիտոր.պարտքեր բյուջեյի գծով	12,970	4,888
Ընդամենը	<b>24,202</b>	<b>78,647</b>

**15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Կանխիկը դրամարկղում	338,0	440,0
Բանկային հաշիվների մնացորդներ	23,178	127,076
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ընդամենը	<b>23,516</b>	<b>127,611</b>

**16. Ոչ ընթացիկ պարտավորություններ**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	118,000	118000
Ակտիվներին վերաբերող շնորհներ տարեվերջին	133,220	415,175
Ընդամենը	<b>251,220</b>	<b>533,175</b>

**17. Ընթացիկ պարտավորություններ**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Կարճաժամկետ բանկային վարկեր	65,000	65,000
Կարճաժամկետ փոխառություններ	21,818	21,818
Ստացված ընթացիկ կանխավճարներ	85,427	47,639
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեյին և սոց.ապահով.գծով	5,769	10,772
Ընթացիկ պահուստներ	8,511	9,255
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,583	3,955
Ընդամենը	<b>189,108</b>	<b>158,855</b>

**18. Եկամուտներին վերաբերող շնորհներ**

Հազար դրամ	2019թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդը	141,265	133,220
Շնորհի ստացում,	-	300,000
Համապատասխան ծախսերի չափով շնորհից եկամտի ճանաչում	8,045	18,045
Տարեվերջի մնացորդ		

**19. Դատական հայցեր**

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գործարանի դեմ կամ նրա կողմից հարուցված դատական հայցեր չկան:

Գործադիր տնօրեն  Ա.Մեհրաբյան

Գլխավոր հաշվապահ  Ս.Գաբրիելյան

